Արևելյան գործընկերության 6 երկրների 6 մարզային քաղաքներ և մարզեր կստանան իրենց ստեղծարար ներուժը զարգացնելու հնարավորություն

Արևելյան գործընկերության մասնակից երկրի մեկ մարզ կամ մարզային քաղաք իր ստեղծարար ներուժը զարգացնելու և «Ստեղծարար քաղաքներ և մարզեր» մեկնարկային նախաձեռնության տարածաշրջաններից մեկը դառնալու հնարավորություն կստանա։ ԵՄ Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի նախաձեռնությանը մասնակցության հայտ ուղարկելու վերջնաժամկետը **2017 թվականի հունվարի 31-ն է**։

«Միջազգային փորձը ցույց է տվել, որ մշակութային և ստեղծարար արդյունաբերությունը կարող է նշանակալիորեն նպաստել սոցիալական և տնտեսական կայուն զարգացմանը»,- ասում է մշակութային և ստեղծարար ոլորտի փորձագետ Ռագնար Սիլը՝ ավելացնելով՝ «Քաղաքների՝ իբրև արդյունաբերական կենտրոնների անկումը համընկավ գիտելիքահեն տնտեսության նոր վերելքի հետ, ինչը քաղաքներին վերածնվելու հնարավորություն ընձեռեց»։

Եվրոպայում ստեղծարար արդյունաբերության կանոնավոր զարգացումն արդեն տալիս է իր արդյունքները։ Օրինակ, 535.9 մլրդ եվրո ընդհանուր եկամուտ ունեցող մշակութային և ստեղծարար արդյունաբերությունները ձևավորում են Եվրոպայի ՀՆԱ-ի 4.2%-ը։ Ոլորտը մեծությամբ երրորդ գործատուն է՝ զիջելով միայն շինարարական և սննդի ու խմիչքի ծառայություններ մատակարարողներին, ինչպիսիք են բարերը և ռեստորանները

(համաձայն «Նպաստելով աճին: ԵՄ-ի մշակութային և ստեղծարար շուկաների գնահատումը» հաշվետվության դեկտեմբեր, 2014թ.):

Արևելյան գործընկերության երկրների ընտրված քաղաքները կամ մարզերը կստանան հետևյալ առավելությունները՝

1. իրենց ներկա մշակութային և ստեղծարար ռեսուրսների վերլուծություն
2. հատուկ մշակված գործողությունների պլան՝ մշակութային և ստեղծարար հատվածների հետագա զարգացման համար
3. ողջ Արևելյան գործընկերության տարածաշրջանում զանգվածային լրատվամիջոցների լուսաբանում և համապատասխան քաղաքների ու մարզերի լավագույն փորձի ներկայացում
4. քաղաքի/մարզերի ներկայացուցիչների և նրանց համայնքների համար նախատեսված կարողությունների զարգացման փաթեթ, ինչպես նաև մասնագիտացված փորձագետների հետ աշխատելու հնարավորություն
5. միջազգային գործընկերների հետ կապեր հաստատելու, ինչպես նաև առցանց և երես առ երես հաղորդակցվելու հնարավորություն թե Արևելյան գործընկերության այլ երկրներում, թե ԵՄ երկրներում:

Նախաձեռնության մասին հավելյալ տեղեկատվություն ձեռք բերելու համար կարող եք այցելել ԵՄ Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի կայքէջը https://www.culturepartnership.eu/am/article/open-call-pilot-towns